սաներով, որ պահում է պ. Ա. Մելիք Ազարեանի օժանդակութեամբ։

11. Ռահուայի դպրոցը Որմի գաւառում 20 աշակերտով։

Ցիշեալ տասնեմէկ ուսումնարաններից 4 ը պահում է ընկերութեան հաշուով, իսկ եօթը՝ բարերարների հաշուով։ Այդ բոլոր դպրոցներում ուսանում էին 320 աշակերտ և 100 աշակերտուհի։

Ընկերութիւնը Թաւրիզում ունեցել է հետեւեալ հաստատութիւնները.—

12. Մանկապարտէզ՝ Ղալայում—45 երկու սեռի սաներով.

13. » Լիլավայում—46 » » »

18. Գրադարան-ընթերցարան Ղալայի մանկապարտիզին կից, որ ունի 500-ից աւելի ընթերցանութեան գրքեր և որից օգտւում է քաղաքի իգական սեռը։

Ընկերութիւնը այդ տարեշրջանում ունեցել է 68 տարեկան, 40 մշտական և 19 պատսաւոր անդամուհի։

Ընկերութիւնը յիշեալ դպրոցների վերայ վերջին տարին ունեցել է ծախք 40,654 դրան 84 կպ. իսկ ներկայումս ունի դրամագլուխ 49890 դրան 70 կպ.։

Ընկերութեան վարչութիւնը աւետում է իւր տեղեկագրում, որ «պ. Տիգրան Աֆրիկեանը, որ իր հաշուով պահում էր 2 երկսեռ դպրոց... յղացել է մի վերին աստիճանի մարդասէր միտք, այն է 39 հայաբնակ գիւղ ունեցող, բակկ. 1200 տնից, Որմի գաւառը իր շրջակայքով պատել դպրոցական ցանցով... մեծանուն բարերարը որոշել է այդ դպրոցների թիւը, որոնք երկսեռ պիտի լինին, առ այժմ հասցնել 20-ի, նպաստ յատկացնելով իւրաքանչիւրին տարեկան 250 թուման»։

ԴԵՐԱՍԱՆ ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

Պարիզի կոնսերվատորիայի վերջնական քննութեանը դրամատիքական արուեստի բաժնում առաջին ոսկէ մեդալ է ստացել, ինչպէս հաղորդում է Т. Д. լրագիրը, Սիլվէնի աշակերտ հայազգի Մաքսուտեանը, որ արդէն հրաւիրուած է Պարիզի գլխաւոր և լաւագոյն դրամատիքական թատրոններից մէկում —Օդէոնում-առաջնակարգ կոմիքական դերի համար։ Ֆրանսիական մեծ թերթերի յայտնի քննադատներ Կատուլ Մէնդէսը, Ժիւլ Պլասին, Էմիլ Արէնը և այլն միաբերան գովում են պ. Մաքսուտեանին և նորա համար լաւ ապագայ գուշակում։